

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի
2015թ. նիստերի արձանագրություններ

Արձանագրություն 1

2015թ. փետրվարի 7-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ՝ նախագահությամբ Ռ.Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ.Ասոյանի:

Նիստին ներկա էին գիտխորհրդի 31 անդամներից 27-ը:

Օրակարգ՝

1. Գավառի պետական համալսարանի 2013-2014 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում:

/զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

2. ԳՊՀ 2014-2015 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

3. ԳՊՀ ներքին գնահատման և ինքնավերլուծության գործընթացի մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

4.«ԳՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրության» մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

5.«ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության կանոնակարգում» փոփոխություններ կատարելու մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

6.ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման քաղաքականության մշակման և իրականացման, կրթության որակի ներքին ապահովման ընթացակարգը ուժը կորցրած ճանաչելու և ԳՊՀ որակի ապահովման ձեռնարկը հաստատելու մասին:

/ զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

7.Ընթացիկ հարցեր:

Նիստի սկզբում ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը հանդես եկավ հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթի և Դանիա կատարած գործուղման մասին հաղորդումով: Նշված մրցույթում հաջողության են հասել բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի /«Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ»/ 2-րդ կուրսի ուսանողուհի Է.Լազյանը և բնագիտական ֆակուլտետի ԻՇՏ բաժնի ուսանող Մ.Հովհաննիսյանը՝ զբաղեցնելով համապատասխանաբար 2-րդ և 3-րդ տեղերը: Ինչ վերաբերում է գործուղմանը, ապա այն անցել է աշխատանքային մթնոլորտում և բավականին արդյունավետ է եղել:

Այնուհետև Ռ.Հակոբյանը ներկայացրեց ԳՊՀ 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվությունը: Անդրադարձ կատարվեց համալսարանում կատարված ուսումնական, գիտահետազոտական գործընթացներին, տնտեսատեխնիկական աշխատանքներին, արտաքին համագործակցային ծրագրերին, համալսարանի ստորաբաժանումների, ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեությանը: Նշվեցին բացթողումներն ու թերացումները, առավել կարևորվեցին ապագային միտված խնդիրները, մասնավորապես բուհի ինքնավերլուծության և ինքնագնահատման հետ կապված հարցերը:

Օրակարգի 2-րդ և 3-րդ հարցերի մասին զեկուցեց ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանը: Միանալով հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթում հաղթողներին ուղղված շնորհավորանքներին՝ զեկուցողն ավելացրեց նաև մեկ այլ ուրախալի փաստ՝ հանրապետության բուհերի վարկանիշավորման սանդղակում ԳՊՀ բարձր տեղ գրավելը: Նա նշեց, որ դրանք հաղթանակներ են, որոնց համալսարանը հասել է համատեղ, ջանադիր և մեթոդապես ճիշտ կառուցված աշխատանքի միջոցով: Խոսելով ԳՊՀ գնահատման համակարգի առավելությունների մասին՝ Ն.Կուտուզյանն ասաց, որ դրան տրվող գնահատականները հաստատվում և արժևորվում են առավելապես ամփոփիչ ատեստավորման ժամանակ: ԳՊՀ գնահատման համակարգը հնարավորություն է տալիս ի մի բերել ուսանողի մասին բոլոր տվյալները:

Ն.Կուտուզյանը հանգամանորեն անդրադարձավ 2014-2015 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու և

անցկացնելու ուղղությամբ կատարվելիք աշխատանքներին: Ներկայացվեցին անցկացվելիք միջոցառումների ցանկն ու ժամանակացույցը, տրվեցին լրացուցիչ տեղեկություններ ու բացատրություններ, դեկանատներ կառաքվի համապատասխան շրջափերական:

Ձեկուցողը ներկայացրեց նաև համալսարանի ինստիտուտցիոնալ կարողությունների ներքին գնահատմանը և ինքնավերլուծությանը վերաբերող հարցերը: Պարզաբանվեցին դրա հետ կապված մի շարք խնդիրներ՝ նպատակը,

ժամանակացույցը, վերջնարդյունքը՝ հավատարմագրումը և այլն: Համալսարանի ողջ կոլեկտիվին այդ աշխատանքում ներգրավելու նպատակով յուրաքանչյուր ստորաբաժանում զբաղվելու էր որոշակի չափանիշ(ներ)ի ուսումնասիրությամբ, այնուհետև կազմակերպվելու էին կատարված աշխատանքի համատեղ քննարկումներ, պատրաստվելու էր գեկույցի նախնական ամբողջական տարբերակը: Աշխատանքի արդյունավետությունը ապահովելու նպատակով առաջարկվեց կատարման փուլային տարբերակ. 1-ին փուլ-մարտ, 2-րդ փուլ-ապրիլ, 3-րդ փուլ-մայիս, 4-րդ փուլ-հունիս: Աշխատանքի ընթացքում պետք է ապահովել տվյալների տարածումը և տեղեկատվությունը: Ուշադրություն հրավիրվեց միջազգային փորձագետներին ներկայացվելիք փաստաթղթերի ցանկի վրա՝ տրված ՈԱԱԿ-ի կողմից:

Ձեկուցման շուրջ ելույթներ ունեցան դեկանները, փոխդեկանները, գիտ-խորհրդի այլ անդամներ:

Ընթացիկ հարցերի շարքում Ն.Կուստուզյանը ներկայացրեց հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Վարսիկ Ներսիսյանի «Բառակազմական բառարան-ուղեցույցը» տպագրության երաշխավորելու հարցը:

Նշվեց, որ աշխատանքը քննարկվել է ամբիոնի նիստում և տրվել է դրական եզրակացություն: Գիտխորհրդի քննարկմանը և հաստատմանը ներկայացվեցին նաև երկու փաստաթուղթ՝ «ԳՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն» և «Կանոնակարգ ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության»: Քննարկելով ներկայացված փաստաթղթերը՝ գիտխորհրդի անդամներն առաջարկեցին հաստատել դրանք:

Նիստի վերջում ելույթ ունեցավ ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Ամփոփելով նիստի աշխատանքը՝ նա ասաց, որ անհրաժեշտ է ժամանակին պատրաստել ամփոփիչ ատեստավորման առարկայական հարցաշարերը, կարգավորել ուսանողների փաստաթղթերը, կազմել խորհրդատվությունների ժամանակացույցը:

Հիմք ընդունելով զեկուցումները, ելույթները և առաջարկությունները՝
գիտխորհուրդը

Որոշեց՝

- 1.ԳՂՀ ռեկտոր Ռ.Հակոբյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
- 2.Հանձնարարել դեկանատներին, ամբիոններին պատշաճ կերպով իրականացնել ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման նախապատրաստա-կան աշխատանքները՝ համաձայն նախօրոք մշակված ժամանակացույցի:
- 3.Հաստատել բուհի ինստիտուտցիոնալ կարողությունների ներքին գնահատման և ինքնավերլուծության գործընթացի ժամանակացույցը:
- 4.Վ.Ներսիսյանի «Բառակազմական բառարան-ուղեցույցը» երաշխավորել տպագրության:
- 5.Ուժը կորցրած ճանաչել ԳՂՀ գիտխորհրդի 2006թ. ապրիլի 21-ի նիստում հաստատված «Գավառի պետական համալսարանի ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը»:
6. Ուժը կորցրած ճանաչել ԳՂՀ գիտխորհրդի 2007թ.հոկտեմբերի 15-ի նիստում հաստատված «Գավառի պետական համալսարանի ակադեմիական քաղաքականության վարչության կանոնակարգը»:
- 7.Հաստատել «Գավառի պետական համալսարանի օրինակելի կանոնադրությունը» (փոփոխություններով):
8. Հաստատել «Գավառի պետական համալսարանի ակադեմիական քաղաքականության վարչության կանոնակարգը»(փոփոխություններով):
- 9.Ուժը կորցրած ճանաչել ԳՂՀ-ում կրթության որակի ապահովման քաղաքականության մշակման և իրականացման, կրթության որակի ներքին ապահովման ընթացակարգը և հաստատել ԳՂՀ որակի ապահովման ձեռնարկը:

Գիտխորհրդի նախագահ՝ Ռ.Հակոբյան
Գիտքարտուղար՝ Թ.Ասոյան